

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

Մի՛ ԿՈՒ ՀՅՈՒԱԾՈԿ ԶՈՔԻՆ.

Լուաբուք զի ասացաւ. Ակն ընդ ական, և տամն ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեղ՝ Մի՛ կալ հակառակ չարին, այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնոտ քոյ դարձն նմա և զմիւմն: Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նա զրաճկն քո: Եւ որ տարապահնակ վարիցէ զքեղ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս: Մատթ, Ե. 38—41:

Աւետարանի բոլոր պատգամօրէնքները մի կշիռ ունին և մի չնաշխարհիկ Աստուածային կատարելութիւն: Նրանց մէջ չըկայ մեծ և փոքր առաջնակարգ և երկրորդակարգ, նրանք բոլորը հաւասար են իրենց զօրութեամբ և նշանակութեամբ, կազմելով մի հրաշալի ներգաշնակութիւն: Ինչպէս հաւասարակող կլոր արջանակի յենման կետը մի տեղ չէ յատկապէս, ամբողջութեան մէջ է, այդպէս էլ Աւետարանը չունի յենման կետ, բայց եթէ ամբողջութեան մէջ, Չըկայ նրա մէջ քնդունելի և անընդունելի կանոններ, չըկայ նրա մէջ թերի և կիսատ խօսք կամ դատողութիւն, չըկայ նրա մէջ կրիտիկայի՝ քննադատութեան ենթակայ յօդուած: Ոչ մի բան չըկայ նրա մէջ ժամանակից գուրս և հնացող, որ այլ ես պէտք չէ, նա միշտ ժամանակակից է, յաւերժ թարմ, յաւիտեան կենսունակ, անփախճան, տիեզերական ակոխօմա-ճշմարտութիւնների մի կօդեքս՝ մաքրող, կատարելազործող, փրկող և կենազործող: Նա վերջին խօսքն է, մարդկութեան իդէալ՝ բնագաղափարը, մեր աստուածարումը և լրումը ամեն իդէերի: Աւետարանի տիրապետող թագաւորութեան ներգործութիւնը մարդկութեան վրայ այլ ես անխուսափելի է, և մենք անպայման ենթակայ ենք նրան, ինչպէս մի նոր ծագած արեգակի

ազդեցութեան։ Աւետարանի մի օրէնքն ընդունողը և պահողը՝ ամբողջն ունի իւր մէջ։ Նրա մասը լրիւ ամբողջի մէջն է և ընդհակառակն ամբողջը լրիւ մասի մէջ։ «Մի հալ հակառակ չարին», սա էլ ճիշտ այնպէս բացարձակ օրէնք է, ինչպէս որ «Զայտ պատուիլիսմ» զի սիրեսջիր զմիւմեանա»։ Կամ «Զօր ինչ կամիք թէ արասցեն ձեղ մարդիկ, այնպէս և գուք արարէք նոցա» և այլն։ «Մի կալ հակառակ չարին»ը Աւետարանական այլ սկզբունքների պէս սրբազնութիւն չի վերցնում և առանց սահմանափակումների մարդ պիտի աշխատի որչափ կարող է շատ գէպքերում և շատ առիթներով գործադրել այդ վեհ օրէնքը, որի հետեւանքները միշտ բարերար են և տպաւորութիւնն ու ներգործութիւնը հոգերանօրէն և տրամարանական կերպով ճիշտ հաշուած։

Մենք պէտք է նախ օրէնքները զիտակցենք և ընդունենք, ապա թէ ճգնենք կատարել՝ որչափ կարող ենք, ովի ինչ կարող է, այն միայն կանի, աւելին պահանջել, տրամարանական չէ։

Յաճախ, չարին չըհակառակելով, նրան մեռցնում ենք, արմատախիլ անում, վասն զի հակառակելով՝ նրան զրգիւ ենք տալիս, որով կենսունակ է դառնում և գոյութիւն պահպանում։ Մի հակառակէք չարին, որով գուք զինաթափէք անում հակառակորդին, յեղաշրջում էք նրա հոգին, արթնացնում նրա խիղճը և զիտակցութիւնը ու նրա մաքերին բարի ուղղութիւն տալիս, չըհակառակելը նոյն իսկ անասունների և գաղանների վրայ էլ է ազգում։

Արգարեւ, մի կալ հակառակ չարին սկզբունքը ուժեղ սասանեցնող տպաւորութիւն է գործում։ որ նրա առաջնակարգ ազդեցութեան ու անհրաժեշտ կարեւորութեան երաշխիքն է, շատերն կանխակալ անիրազործելի են համարում։ սակայն ծանրակշիռ խոկալով, կեանքի երկոյթները քաջ զիտելով և ուսումնասիրելով, այլ և ինկատի ունենալով բարոյական ազդակների ներգործութիւնը մեր հոգու ելեկջների վրայ, մենք դիւրութեամբ վերահասու կը լինինք և կը համոզուինք, որ այդ վեհ սկզբունքն է։

Հղօր բարոյակըթական միջոց, որով մարդ կարող է գերահատար մի եւակ դառնալ: Միայն դրա մէջ համոզուիլը և իրին դաւանանք ընդունելն արդէն մարդու հոգին որոշ աստիճանի ազնուացնում է և բարձրացնում: Թող զգործադրումը ըստ չափու կարողութեան կեանքի մէջ:

Առօրեայ կենցաղավարութեան մէջ մանաւանդ շատ առիթներ կան այդ օգտակարագունեղ կանոնը ի կիր արկանելու որով շատ թիւրիմացութիւնների, վէճերի, կռիւների, մեածների, ոճիրների առաջը կառնուի, դործադրողի վարկը և հեղինակութիւնը կը բարձրանայ ու շրջապատողների վրայ լուրջ դաստիարակչական ազդեցութիւն կունենայ:

Նատ անդամ՝ փոքր կամ մեծ չափով չար գործողի չը հակառակելով, նա ցնցւում է և վայրկենապէս փոխւում է նրա յոսուի և կատաղի տրամադրութիւնը, նա ապշում է և ընդարմանում: Նրա մէջ խօսում է քնքոյց անձնասին ըռութիւնը և պատուի զգացումը, նրա մէջ յառաջ է գալիս խղճի բարերար խայթ, ապաշաւումն և զղջումն:

Մի՛ հակառակէք շարին, երբ նա ինչպէս հիւանդութիւն, ախտու, վէրը ձեր գործելակերպով պիտի գրգուէք նրան և դրդէք աւելի բորբոքուելու և ձեզ ևս վարակելու: Երբ չըկայ փոխադարձութիւն, բնական է, մի կողմն էլ ընդարմանում: Կապւում է:

Խնդիրը բոլորովին հոգերանական է և պիտի այս օրէնքը գործադրուի այնտեղ, որտեղ կարելի է ազդել հոգու, մոքի և սրտի վրայ, չըպէտք է նրան նիւթականացնել և արբշիռ ծայրայեղութիւնների մէջ ընկնել: Օրինակ՝ ասելով խօսելը չարիք է, կարելի է նրան յաղթահարել չը հակառակելով և այլն:

Մի՛ կայ հակառակ չարին օրէնքը, որպէս աղ-համեմունք նոյն իսկ մանկավարժութեան մէջ էլ կարելի է որոշ չափով գործ ածել, աշակերտների վատ հակումների և չարութիւնների գէմ: Որոնք հետապնդուելով երբեմն աւելի ստատկանում են:

Ընդունողը և հնարաւորին չափ ի կիր արկանողը Աւետարանական այդ աղջու միջոցը՝ ցոյց է տալիս, որ նա

տոգորուած է Յիսուսի հոգով, որ նա բարեկիրթ է: «Մի
կալ հակառակ չարին»ը մարդուն դարձնում է տոկուն համ-
բերող, քաջակորոց, վեհանձն և բարեսիրտ:

Հանճարեղ ոռւս փիլիսոփայ կեւ Տօլստոյը իւր մի զրոյցում պատմում է, որ մի երկրի վրայ, երբ թշնամին ները արշաւանք արին, բնիկները չընդդիմագրեցին, այլ միայն լալիս էին, այն ժամանակ թշնամին ամօթահար թողեց հեռացաւ:

Ամեն բան կախուած է կրթութիւնից, երբ առողջ
մտքով դաստիարակութին մարդիկ մի կալ հակառակ չարին
օրէնքով, ի հարկէ որ մեծ մատենագրի յիշածի նման ե-
րևոյթներ էլ կարող են տեղի ունենալ:

Քրիստոնեայ լինելով՝ մենք պիտի Քրիստոսի հոգին
ունենանք և կրենք մեր մէջ. Աւետարանի այս մի կանոնն
էլ մենք պիտի ընդունենք որպէս կեանքի հաց և նրանով
սնուենք. Տէրն ասել է, որ իւր քարոզածի վերջին նշանա-
խեցն էլ պիտի կատարուի, երկինք և երկիր կանցնեն, բայց
նրա խօսքերը չեն անցնիլ:

U. S. S. U.